

42. ՃՆՃԵՈՂ ԹԱՔԱՎՈՐ

Կէլնի կէլնի մեյ խատ խեղճ, աղքյատ մարթմ ինան ուր կնիկ:

Էսա մարթուն մեյ խատ լաճ կէլնի: Լաճ որ կէլնի յոթ տարեկան, խեր կմեռնի. ըսկուն որ էսա լաճ կմնա անտեր:

Իսոնքյ ըսկուն աղքյատ կէլնեն որ, զմեն օր էսա կնիկ ուր յոթ տարեկան լաճ կառնի կէրթա դաշտ ցախ, պանջար-մանջար կժողվեն, կպիրեն, իտրով իտարա կանեն:

Ավուր մեկ էսա կնիկ ինան ուր լաճ կէրթան դաշտ: Էփեջա պանջար-պան կժողվեն, կլյեն ուրենց պստիկ տոպրակներաց մեչ:

Տղեն ի, թե որ շատ պստիկ ի կթյուլնա, կմնա էնտեղ:

Մերն ի, կտիսնա որ լաճ նեղուսցե, կպիրի էտա լյված տոպրակներ, կտնի տղի գյլխուն, կպառկյյուցի էնտեղ, կասի՝ թող քյնի, խեղճ ի: Ինքյ կթողնի կէրթա՝ էնդիխ պանճար ժողվել: Հա՝ կժողվի, հա՝ կիրիշկա որ տղեն գյեռ էնտեղ ռհաթ պառկե քյնե:

Էսա տղեն ի, աչկեր մեյ խատ կպանա՝, կտիսնա որ մեր չկա: Դո՛ր որ կիրիշկա՝ մեր չէրնա, ճար կկտրի՝ կէլնի տոպրակ կթալի թև, կէրթա մոր կընտնի բա՝ղքյի: Դո՛ր որ կէրթա՝ չի կանա կընտնի: Կէրթա՝, կէրթա՝, շատ կէրթա մեյ խատ ծովըմ ռաստ կուգյա: Կնստի էտա ծովի ա՝փ, խետ ավզներաց կբաշլայի խաղալ:

Էն օր շատ քյամի կէլնի: Թաքավորն էլ էն օր կառաս էլեր էր վեր ծովուն ֆռալ: Ֆռթնա կէլնի, թաքավորու կայեղ կուգյա կինի էսա ծովու ափ: Կաչկեն չո՛ւր ֆռթնեն տա՝տրի, որ ինին ճա՝մբա՝խ: Համան ճար չէլնե, քյամին հա կզոռի:

Թաքավորուն էլ կէլնի մեյ խատ յոթ տարեկան պստիկ ախչիկ:

Էտա ախչիկ որ կտիսնա ծովի ա՝փ մեյ խատ ուր գյեռրա տղեմ նստե խետ ավզներաց կխաղա, աղաչանքյ կինի խոր-մոր, կասի՝ գյամուց զիկ խանեք տյուս, էրթամ տղի խետ խաղամ:

Թաքավորն ի, կտիսնա որ քյամին տապտել չկա, ախչկան խաթր չի կոտրե, կխանի տյուս, ախչկան կասի՝ դե կնա՛, բալամ:

Էսա ախչիկ կէլնի տյուս, կուգյա կտիսնա, որ էսա տղեն տոպրակ խանե տյուս, մեչիս կճեռկի՝ որն որ քյաղյր պանջար ի, կխանի կուտի:

Էսա թաքավորու ախչիյն ի որ կտիսնա էսա լաճ պանջար կուտի, ծեռիս կպոնի, կառնի: Կառնի կէրթա՝ ուր խոր-մոր մոտ, կասի. - Տե՛ս, աղա, էնա տղեն անութի յի, էսա խոտեր լյեր ի ուր տոպրակ, եվ անութնա կխանի, կուտի:

Թաքավորն ի, որ կտիսնա էսա պան, ուր թոռպիս կխանի ճանգյըմ շաքյրե խաս, կուտա ախչկան, կասի՝ ա՛ռ տար տուր էն տղին:

Ախչիյն ի, կխանի էտա շաքյրե խաստեր, կուգյա կուտա էսա տղին:

Տղեն ի, կառնի՝ շատ կուրախնա վերեն, մեյ քանիմ խատ կուտի, էն մեկելներ կթալի տոպրակ, կասի՝ ես էլ տանեմ մամուն:

Չուր իրիկուն կաչկին, թաքավոր կտիսնա որ քյամին առեց դադրել, կայեղչուն կասի. - Էլի՛, էլի՛, կայեղ քյաշի:

Կայեղչին է, կէլնի չվընիտեր կկապի, դուման կզանի, կտառնա թաքավորին կասի. - Դե հազր կայեք, որ կայեղ քաշեմ:

Թաքավորն ի, որ կտիսնա առիս մթնել, էսա տղեն ալա էնտեղ բեխամ նստե կխաղա, տեր-տիրական չկա, կկանչի տղեն ուր մոտ, կխառնցուցի, կասի. - Բալա՛մ, ու՞ր է քյո խեր-մեր, որտե՞ղ են կնայե:

Էսա պստիկ տղեն ի, կասի. - Աղա՛, չեմ կիտե, խետ մորս էկանքյ դաշտ պանջար ժողվել, ես քներ ի, բիրդան աչկս պայի, տեսա որ մերս չկա: Որտեղ իրիշկայի, չտեսա, ես էլ էլա ինգյա իտե, ասի բալքյի կընտնեմ, տեսա մարթ չկա, նստա ընտեղ, ասի տիսնամ խենքյ ի՞նչխ կէլնի:

Թաքավոր կտիսնա, որ տղեն անտեր ի մնայե, ուր պստիկ ախչիյն էլ կասի. - Աղա՛, տանենքյ խետ մե:

Կվերուցի կտնի ուր մոտ, կտառնա էսա տղին, կասի. - Քյե կտանեմ կուտամ քյո մոր, - կասի. կայեղչուն կասի, - դե՛ կայեղ քյաշի:

Թաքավորն ի, կառնի էսա տղեն, կէրթա ուր սարեն, նտիսնա որ տեր-տիրական չկա, կանի ուր տղա: Ինք զաթի տղա չունի: Ուր ախչկան խետ կտնի վաժաուրուն, կէրթան քյեոր վ'ախպոր պես կուգյան:

Մնա կճոճանան, կասես քյեոր վ'ախպեր էլնեն:

Եվ կճոճանան, էրկուսն էլ կէլնեն փսայվելու, թաքավորն ի, ինքյ ուր կասի. «Էսա տղեն իմ մուր ճիճայավ, իմ բիթուն պան զիգնիս շատ խորոտ կիտի իմ երկիր կառավարել: Պիրենքյ էսա ախչիկ խետ իսոր պսակենքյ, իմ մեռնելուս սորա թող էսա լաճ իմ երկիր կառավարի, քյանի որ ես էլ լաճ չունեմ»:

Թաքավորու կնիյն ի, էն էլ ուր մեչ էտասկնա կմտածի կասի. «Պիրենքյ էսա լաճուն պսակենքյ մեր ախչկան վերեն, աղեկ ի, մե մեկելու թաբահաթ առեր ին, խորոտ ի, մենքյ էլ տղա չունենքյ հաքյի»:

Թաքավոր ուր մեչ կմտածի սկնա, կնիյն ուր մեչ. սկուն որ մեյ մեկելու չեն ասե: Էն կասի՝ վախենամ էն կաբյուլ չանի, էն կասի՝ վախենամ էն կաբյուլ չանի: Ակնա մեյ ժամանակ կմնա:

Ավուր մեկ էսա թաքավորն ի, կասի. «Ջայինամ, մեյ խատ ես իմ կնգյան էսա բաս պիտի պանամ»:

Մեկ իրիկուն քյնու գյախ թաքավորն ի, կասի ուր կնգյան. - Կնիկ, - կասի, - էսա կանդար որ ես իմ մտկի մեչ պախեցի, համան էսօր էլ չեմ կանա: Ես միտկ արեր եմ օր էսա լաճ պսակենք մեր ախչկան վերեն, ինորից աղեկ չելնէ, տղեն մեր տան մեչ ճոճացե, մեյ մեկելու թաբահաթներ առեր են: Մենք էլ զաթի լաճ չունենք, շատ աղեկ հ'արմար են:

Թաքավորու կնիյն ի, կասի. - Քյա՛ մարթ, տոդրին որ կուզես, էսա պան ես երկու ամիս առաճ մտածիր ի, համան դասարաթ չի անե քյե ասի: Էս օր աղեկ որ էսա խաբար քյեզնից կելնի: Ես խոքյովս-սոտրովս կուզիմ որ էտասկընա էլնի, իտորից աղեկ չկա:

Կասին, ուրենց մեչ կորոշին, որ էսա լաճուն ասին, տիսնան խենք լաճ ի՞նչ կասի:

Ավուր մեկ թաքավոր կկանչի էսա լաճուն ուր մոտ, կասի. - Բալա՛մ, տյու ճոճացեր իս, հաղն ի քյե պսակենք, - կտառնա կասի, - ես ինան իմ կնիկ մտածիր ինք, որ քյե պսակենք մեր ախչկան խեստ: Մենք զաթի տղա չունենք, համտայել պառվյեր ինք, մեր մեռնելուց սորա իմ երկրներ տյու պիտի կառավարես, իմ թաքավորութեն քյե պիտի մնա, մենք չենք ուզե ուրիշ մարթ պիրե մեր տան մեչ:

Էսա տղեն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, էտասկնա պան ի՞նչխ կելնի: Ես քյո ախչկան խեստ ըսկուն իմ, ճիշտ քեոր վ'ախպոր պես, ես ի՞նչխ էլնեմ իմ քյուրոչ խեստ պսայվեմ: Ես էտասկնա պան չիմ կանա անե: Թե որ տյուք կուզեք զիկ ծեր տնից տյուս խանել, զիկ քիչըմ ճամխու ծախս տվեք, ես կէրթամ բալքյի իմ մեր կընտնեմ, ինոր խեստ ապրեմ:

Թաքավորն ի, կտիսնա որ էսա լաճու սոտի վերեն չէկավ էսա խաբար, մեկ ժամանակ ծեներ կկտրեն, կասեն սալա տղա յի, թող մնա:

Հա ըսկնա լաճու ականջ կծակին, մեկ օր թաքավոր կասի, մեկ օր թաքավորի կնիկ կասի, վարհասլ, լաճուց խոսկ կառնեն: Ուրենց ախչկան էլ կասեն, թե ըսկնա պանըմ կա, կուզես էսա լաճու խեստ պսակվել:

Ախչիյն ի, կասի. - Ինչի՞ չէ, ինորից խորոտ տղա պիտի կընտնեմ զիկ հարմար:

Կընցնի մեկ քյանիմ ամիս, էսա լաճ ինան էսա ախչիկ թաքավոր կպսակի:

Կընցնի մեկ ժամանակ, էսա թաքավոր կմեռնի, ուր էլած-չելած կթողնի էսա լաճուն:

Էսա լաճ կելնի թաքավոր, ուր խոր երկրներ բիթուն ինք կկառավարի:

Էսա թաքավորու մերն ի, կտիսնա որ ուր լաճ կնայ կուրիսվավ, էլ նա պանի, նա գյոռծի, կիշեր-կերեկ կբաշլայի լալ-մոմոալ կուրիսած

լաճու խամար: Ձմեն օր կէրթա ժամ, Ասպածածնա պապկըրքյի առճև ծունգյ կզանի գյեփին, կուլա, կմռմռա, ճար չէլնե:

Մեկ օր էսա ժամփան փերփեր կփիսնա որ բիթուն օր էսա կնիկ կուգյա ժամ, մոմ կվառի, Ասպածածնա պապկրքյին, ծունգյ կզանի գյեփին, կուլա, կմռմռա, կպռփվի, կասի՝ անպապճառ էսա կնգյան մեյ դարփ կա, որ ըսկնա կանի:

Կկանչի ժամխար, կասի. - Ժամխար, էսա իրիկուն որ ժամ կառցկվի, էսա կնգյան ասա թող չէրթա փուն, թող մնա խենքյ իսոր դարփ ի՞նչ ի, որ ըսկնա բիթուն օր կուգյա էսա Ասպածածնա պապկերքյի առաճ մոմ կվառի, ծունգյ կզանի գյեփին, կուլա, կմռմռա:

Ժամխարն ի, իրիկուն որ ժամ կառցկվի, կէրթա էփա կնգյան կասի. - Մամա՛, կաց, ալա մ'էրթա փուն, կաց, փերփեր քյե պան կասի:

Տերփերն ի, կկանչի էսա կնգյան, կասի. - Ես էսա մեկ-էրկու ամիս էլավ որ քյե կփիսնամ՝ կուգյաս ժամ, կառնես մոմ, կէրթաս Ասպածածնա պապկերքյի առաճ մոմեր կվառես, ծունգյ կփնես կուլաս: Կուլաս կմռմռաս, որ ասփծուն փիժար կուգյա, ախր քյո դարփ ի՞նչ ի, մեկ ասա, բալքյի ճարմ էլնի:

Էսա կնիյն ի, կասի. - Տեր հա՛յր, ի՞նչ ասիմ, իմ դարփերն վո՞վ կանա դարման անե, իմ խելքյ չի խասնե:

Տերփերն ի, կասի. - Տյու ասա, փիսնանք խենքյ բալքյի ճարմ կանանքյ անե:

Կնիյն ի, կասի. - Տեր հա՛յր, մկա մեյ մարթու չիւր մկա չեմ ասե իմ դարփ, մկա քյե կասեմ: Ձիկ մեյ խափ յոթ փարեկան լաճըմ կեր: Մեկ օր էլանքյ կնացինքյ դաշփ, ցախ-պան ժողվել: Իմ լաճ նեղացեր էր, պառկցուցի էնփեղ, ասի. «Քյնի՝ չուր ես էսա փարքրներաց ցախ-պան ժողվեմ, կուգյամ քյե կառնիմ, կէրթանք»: Ձիւր իմ ցախ ժողվել, մե կփոր զափացեր ի, սորա էկա փեսա որ լաճս էնփեղ չի: Որփեղ որ ինգյա՝ ճար չէլավ, չկառցա կընփնի, փեռր-փեռշման փառցա էկա փուն, առեցի իմ սուքյ-շիվան, մփա փուն, չիւ՞ր էսօր կուլամ, կմռմռամ, մեյ փեղից մեյ ջյույաբ չեմ առնե: Հալ-հեքաթ գյեռ ըսկնա, փե՛ր հայր:

Տերփերն ի, կփիսնա որ փառ պրփյուճ ի, կբաշլայի էսա կնգյան մխիթարել, ուրիշ ճար էլ չկանա անե: Ի՞նչ անի, կդառնա կասի. - Որփի, ի՞նչյխ անես փյու: Տյու քյո պարփքյփ արեր ես, ի՞նչյխ անես որ չես կառցե կընփնե: Փառք փու ասփծուն, ասա՝ թե որ սաղ ի ասփված ինոր պանին-գյոռծին հ'աջողութեն փա, թե որ մեռեր ի, ասփված խոգյին լուսավորի, ուրիշ ի՞նչ կանաս անե, ասփծու ամրն ի, չես կանա ինոր արածին վերեն գրիւցել, մենքյ բիթիւն էլ ինոր առաճ պան մ'չենք կանա անե:

Ինչ կանդար փերփեր որ կհամոզի, էսա կնգյան ճար չէլնե, փղի մոմոռ ի, դայմահալով մաար փյուս կուգյա՞ առփից մոմոռ: Էլմ'էլ կուլա կմռմռա:

Տերփերն ի, կփիսնա որ ճար չէլնի էսա կնգյան խեփ, կխանի մեյ

խատ Իսուսի խաչելության պատկերքյ, կուտա էսա կնգյան, կասի. - Տե՛ս, զավա՛կս, էսա պատկերքյ, իսոր վերեն մեր տերն ի խաչվե, չարչրվե, իրիշկա պատկերքյի տակ. տես Քյրիստոսի մեր ինան ինոր քույրեր փառքյ կուտան աստծուն: Մենքյ ինորիս ավելի՞ ենքյ:

Կասի, կդառնա պախպանիչ կասի վեր էտա կնգյան, կասի. - Տե էլի, էսա պատկերքյ տիր ծոստ, կնա, ի՛նչ գյախ որ լաճտ միտպ կինի, էտա պատկերքյ խան, հա իրիշկա վերեն, Քյրիստոսի հիմր միտտ պե, մի լա:

Էսա կնիյն ի, կառնի էտա պատկերքյ, կտնի ծոց, կէրթա տուն: Ինչ գյախ որ լաճ կինի միտ, էտա պատկերքյ կխանի տյուս, կիրիշկա վերեն, հա կուլա, կմոմոա էլմ'էլ:

Կընցնի ըսկնա մեկ ժամանակ: Էտա երկիր կռիվ կինի, հար քյաշ կտախին: Ամեն մարթ ինչ որ կանա փախցուցել, կտախցուցի, կտախի:

Էսա կնիյն էլ ինչ որ կանա փախցուցել կառնի, կտախի, էտա Քյրիստոսի պատկերքյն էլ կառնի կտնի ջեռ, կէրթա:

Կէրթան, կէրթան, կէրթան կթափեն մեյ խատ մեշի մեչ: Էտա մեշեն էլ ուրիշ թաքավորուն էր:

Էսա մեշի մեջ իրեքյ օր կմնան: Իրեքյ օր մնալուց սորա էսա կնգյան միտ բիրդան կինի, որ ուր ախպեր էսա երկիր կմնա: Կէլնի կէրթա տողրի ուր ախպոր մոտ:

Էն մեկել օր կնիկ կէրթա ուր ախպոր կկընտնի, ինոր խետ կապրին մեյ տրա: Էն մեկ օր էսա կնգյան միտ կինի, որ Քյրիստոսի պատկեր մոռցեր ի մեշի մեչ, ուրտեղ որ ինքյ էլեր ի, տրեր ի էնտեղ ծառի ճեղքյի մեչ, մոռցե մնացե էնտեղ: Էլ ճար չի կանա կընտնե, որ էրթա էտա ծառի մեչեն պատկերքյ առնի գյա: Շատ կհուսահատվի իտոր վերեն:

Կընցնի ըսկնա ժամանակըմ: Ավուր· մեկ էսա երկրի թաքավոր սմր կանի, կասի. «Վով որ կուզի, թող էրթա իմ մեշեյընտերուց մեչեն մեմեկ ուր խամար փետ կտրի պիրի ուր»:

Ժաղուսմաթ բիթիուն կլյվեն: Էսա կնիկ ինան ուր ախպոր կնիկն էլ կէրթան փետ պիրիլ:

Թաքավոր ինան ուր նազր-վազրներն էլ իկեր ին էտա տեղ ուր զորքյերով, որ կռիվ-պան չէլնի:

Էսա կնգյան ախպոր կնիկ կէրթա մեկ-էրկու խատ ծառ կնշանի, որ կտրի: Մեկն կուգյա կասի. էտա՛ ես իմ նշանե, մեկ ուրիշմ կուգյա, կասի. էտա ես իմ նշանե, կռիվըմ՝ կինի մեչ իսրանց:

Թաքավորն ի, որ կիմնա, թե էնդեխ կռիվ կա, վազրի մեկ կէօրեռխկի, կասի. կնա ինոնց կռիվ տատրյու:

Վազիրն ի, կուգյա կիրիշկա իսոնց կռիվ, պան. խառց-վոռծ, վարհասլ, էսա կնգյան արդար· կխանի, կասի. «Էսա ծառ իսոր պիտի մնա»:

Էսա վազիրն ի, որ իսկի կռիվ պան չէլնի, կասի. «Ավելի աղեկ ի, ես կայնեմ էստեղ կտրել տամ»:

Կկայնի էնտեղ, կտրել կուտա ծառ, ճղճղել կուտա, որ տա էսա

կնգյան շըլակ, տանի: Էտա ճըղած ծառի մեչեն մեյ խատ պատկերքյ տյուս կուգյա:

Վազիր կվերուցի էտա պատկերքյ, կիրիշկա, կտիսնա վերեն Քյրիստոսի խաչելութեն:

Էսա կնիկն ի, կասի. - Տուր զիկ, աֆանդի, էտա իմ ծառի մեչեն տյուս էկավ:

Վազիրն ի, կասի. - Տանեմ մեյ խատ թաքավորին նշանց տամ, տիսնամ խենքյ ինչ կասի, սորա կուտամ քյե, ի՞նչ անեմ:

Վազիրն ի, ափալ-թափալ կառնի էտա պատկերքյ, կվազի մոտ թաքավոր, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, էսա պատկերքյ ենա տեղ ծառմ ճղեցին, ինոր մեչեն էկավ տյուս, տես ի՞նչ ի:

Էն կնիյն էլ իկեր ի, խեստ որ թաքավոր տիսնա, սորա ինքյ առնի էրթա:

Թաքավորն ի, կառնի պատկերքյ կիրիշկա վերեն, կասի. - Ի՞նչ կա որ, գյեռ պատկերքյ ի, Իսուսի Քյրիստոսի խաչելութեն ի ինան Մայր աստվածածին, ուրիշ պան ի՞նչ կա:

Կասի, կուտա վազրին, որ տա էտա կնգյան: Տալու գյախ մեյ խատ որ կտռնի, կտիսնա պատկրքյի իտե գյիր կա գյրված: Գյնա կուզի, կասի՝ մեյ խատ էլ տիսնամ, սորա: Կառնի պատկերքյ, կիրիշկա իտե, կտիսնա գյրեր, կբաշլայի, կարտալ: Վերեն գյրված կէլնի. «Իմ յոթ տարեկան տղեն, անուն Ճնճեռղ, այս ինչ թվականին դաշտ ցախ ժողվելու գյախ կուրիսեր ի. թե սաղ ի՝ աստված ուր պանին-գյոռծին հ'աջողութեն տա, թե մեռեր ի, աստված խոգյին լուսավորի»:

Էսա գյրութեն որ թաքավոր կկարտա, աչկերաց կբաշլայի առցունքյ կաթել:

Թաքավորն ի, կդառնա էն կնգյան կասի. - Մարե՛, էտա պատկերքյ զիկ լազմ ի՝ թող մնա:

Էսա կնիյն ի, կդառնա կէրթա ուր պեռ տեստ կառնի, կէրթա խեստ ուր տալոչ, կէրթան տուն: Ճանպախ էսա կնիկ մեյ-մեկ էտա պատկրքյի պատմութեն ուր տալոչ կանի:

Տալ վ'որ կլսի պատկրքյի պատմութեն, բիրդան միտ կինի ուր պատկերքյ: Էն տարին որ փախեր ին ինքյ տրեր էր վեր ծառին, փախնելու գյախ թողեր էր էտա տեղ, մոռցեր էր էտա ծառի ճեղքյ իկեր էր: Կբաշլայի լալ էլմ'էլ, կասի. «Էն պատկերքյ իմն ի, իմ լաճու հ'իշատակն ի, ես պիտի էրթամ թաքավորուց ուզեմ»: Կասի, էն մեկել օր կէրթա թաքավորու սարեն:

Կէրթա թաքավորու տուն, աղաչանքյ կենի տռնապանին, որ ուր թողնի էրթա մոտ թաքավոր: Տռնապան ծեն չի խանի, կասի՝ կնա:

Էսա կնիյն ի, խեստ մտնելուն ներս՝ թաքավորու էոդեն, կխասնի, ուր կթալի վեր թաքավորու ոտաց:

Թաքավոր խեստ կտիսնա էսա պան, կխանի վեր, կասի. - Մարե՛, ի՞նչ դարտ ունես՝ ասա, ի՞նչի էտասկընա կանես:

Կնիյն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, կվախենամ սւկնջի իտև թալես, ես քյո՛ բախտ, ես իմ մեկ մեռած լաճու հ'իշատակ. ես քյե ըռըջա կանեմ, տյու էսա իմ մեյ խնդիրքյ կատարես:

Թաքավորն ի, կասի. - Մեյ խատ ալա ասա տիսնամ խենքյ քյո խնդիրքյ ի՞նչ ի, սորա:

Էսա կնիյն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես մեյ խատ պատկերքյ ունի, իմ լաճու հ'իշատակիյ: Լսիր եմ որ էտա պատկերքյ քյո մոտն ի, ըռըջա կանեմ, տյու իմ պատկերքյ տաս:

Թաքավորն ի, կասի. - Աղեկ, մամիկ, կուտամ էտա պատկերքյ քյե, համան տյու մեյ խատ պիտի պատմես զիկ էտա քյո տղի պատմութեն, որ ես խասկնամ, տիսնամ խենքյ քյո՞ն ի:

Կնիյն ի, մեյ դեխիյ կուլա, մեյ դեխիյ կբաշլայի պատմել:

Կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես ունի մեյ խատ յոթ տարեկան տղեմ, անուն Ճնճեռղ: Մեկ օր իմ խետ առի կնսւյի դաշտ յախ-պանն ժողվել: Լաճուս քյուն կտաներ. պառկյուցի էնտեղ, ասի՝ ես էրթամ էսա դարբրիյ քիչըմ պան-ման ժողվեմ, նոր գյամ տղես խանեմ վեր որ գյնիքյ տուն: Բիրդան էկա տեսա որ նա տղա կա, նա պան: Իտոր վերեն էլ տեղ չմնայ, էլ սար չմնայ, էլ քյար չմնայ որ չաչկեյի, ճար չէլավ, չկընդա՝ չկընդա, չուր մկա էլ չկընդա: Իսորիյ սորա ոչ օր տեսա, ոչ ասավոր, իմ հւմր չուր մկա լալով, մոմռալով իմ ընցուցե: Ավուր մեկ մեր տերտեր զիկ կանչեյ, ասայ. «Ի՞նչ էլե քյե, ի՞նչ դարտ ունես, որ բիթուն օր կուգյաս ժամ, մոմ կվառիս Աստածածնա պատկըրքյի առաճ, կդառնաս ծունգյ կզանես գյետին, կուլաս կմոմռաս, - ասայ, - ասա, բա՞լքյի քյո դա՞րտին ·դա՞րմանմ' անենքյ»: Իմ գյլխու էկածներ բիթուն պատմիյի, տերտեր էլ խոսկ չմնայ որ զիկ մխիթարեր, խւսնեյ էտա Իսուսի պատկերքյ իտուր զիկ, ասայ. «Ա՛ռ էսա պախի քյո մոտ, ինչ գյախ որ լաճտ միտդ կինի, խւսն իրիշկա վերեն, կմխիթարվես»: Առի էտա պատկեր, պիրի սրբու պես կասեւ ի՛նչխ իմ լաճ կպաշտի: Եփ մեր երկիր կռիվ ինգյավ, մենքյ փախանքյ, էտա պատկերքյ հա իմ առա՛ճ տրած պիտի էլնի: Էկա՛նքյ թա՛տա՛նքյ էս մեշի մեչ, խանի տրի ծառի ճեղքյ, ասի անիմ աչկիս ա՛ռճև: Եփ բիրդա՛ն փա՛խա՛նքյ, մոռցա մնայ էնտեղ: Ծառ ճռճացե իկե առե իրա՛ր, մնացերի մեչ: Սկա ճղեր ին մեչեն տյուս իկե, առիր ին պերեր ին քյո մոտ: Ես մկա քյեզնիյ ըռըջա կանեմ որ տյու իմ կուրիսած լաճու հիշատակ տաս:

Թաքավորն ի, որ էսա պատմութին կլսի, իրես կտառցուցի էն մեկել դիխ, կբաշլայի լա՛լ, ալնախ կխանի, աչկեր կսրպի, կդա՛ռնա՛ էսա կնգյան կասի. - Մարե՛, տյու մա՛ռախ մ'անե, ես քյո լաճ ինչխ էլի կկնտնեմ:

Էսա կնիյն ի, կասի. - Ու˘˘, որտեղի՞յ, էսա քյանի տարի էլավ ինոր կուրիսել, էլ նոր տյու՞ս գյա, էտա չէլած պան ի:

Թաքավորն ի, կասի. - Ես կկընտընեմ, անպատճառ պիտի կընտնեմ:

Ամր կանի, որ էսա կնգյան տանեն, խորոտ խագյվկուցեն, պիրեն:

Խալայիղներն ի, կտանեն էսա կնգյան խորոտ, թազա շորեր կխագյվտուցեն, կառնին կպիրին թաքավորի մոտ:

Թաքավորն ի, ուր էօդեն ինչ կանդար որ մարթ կա, կխանի տյուս, կմնան ինքյ ինան էտա կնիկ:

Կդառնա էտա կնգյան կասի. - Տյու կընտիր ես քյո ճնճեռդ, կընտիր ես հա խորոտ փառքյի մեչ ես կընտե. ես իմ, ես իմ քյո ճնճեռդ:

Կասի, կինի մոր վիգ-շլինքյ, ուրախութեն կբաշլայի լալ:

Մոր խելքյ զաթի կէրթա: Նոր կվազեն ճյուր, խեքյիմ կպերեն, խելքյ կպերեն վերեն: Նոր կուրախնա, նոր օր-աստվոր կանի:

Թաքավորն ի, կասի. - Տյու, մարե՛, էսականդար օր որտե՞ղ կապրիր:

Մերն ի, կասի. - Բալա՛մ, իմ ախպոր տուն:

Թաքավոր կասի. - Քյեռին ալա սա՞ղ ի:

Մերն ի, կասի. - Խա՛:

Թաքավորն ի, կկանչի ուր քյեռուն, ուր սարի մեչ պաշտոն կուտա:

Էսասկընա չուր մեռնեն՝ կապրեն: